Արմավիրի Մ. Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ուսումնական նախագծի կատարման վերաբերյալ

Թեմա՝

«Сладкий русский язык: фантики и правописание»

Առարկա՝ «Ռուսաց լեզու»

Դասարան՝ 7բ

Ուսումնական նախագծի ղեկավար՝ Ժ. Առաքելյան

Արմավիր 2023

2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի ընթացքում (30.10-30.11) իրականացվել է ուսումնական նախագծային աշխատանք «Сладкий русский язык: фантики и правописание» թեմայով։

Նախագծային աշխատանքի շրջանակներում ստեղծվեց աշխատանքային խումբ 7բ դասարանում սովորող երեք աշակերտներից՝ Ավդալյան Զառա, Խաչատուրյան Էլմիրա, Հարությունյան Գայանե։ Ուսումնական նախագծի աշխատանքային ընթացքը ղեկավարում էր 7բ դասարանում դասավանդող ռուսաց լեզվի ուսուցիչ Ժ. Առաքելյանը։

Հետազոտական նախագծի վրա աշխատելու ընթացքում հեղինակները նպատակ էին դրել դիտարկել կոնֆետների անվանումները ռուսաց լեզվի ուղղագրության տեսանկյունից՝ կիրառելով ռուսաց լեզվի դասերին ձեռք բերված գիտելիքները։

Աշխատանքը հիմնված էր ռուսաց լեզվում բառերի ուղղագրության մասին տեսական տեղեկատվության վերլուծության վրա, ինչպես նաև ուսումնասիրվել էին կոնֆետների անվանումները։ Հեղինակները դասակարգել էին կոնֆետների փաթաթանների մակագրությունները ըստ կառուցվածքի, բառային իմաստի, մորֆոլոգիական բնութագրի, կազմավորման եղանակների։

Վերոնշյալ նախագծում հեղինակները հավաքել և վերլուծել էին ուսումնասիրվող հարցի վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, ինչպես նաև կատարել էին գործնական աշխատանք՝ կոնֆետների փաթաթանների վրա գործածված բառերի ուղղագրության ուսումնասիրության ուղղությամբ։

Դատելով բոլոր պլանավորված հետազոտություններից և ուսումնասիրելով տարբեր գրականություն՝ աշակերտները նոր տեղեկություններ ստացան կոնֆետների փաթաթանների պատմությունից։ Պարզեցին, որ իրենց գոյության սկզբից կոնֆետները եղել են ոչ միայն անուշեղեն, այլ նաև ուսուցման, կրթելու, ճաշակի և գեղեցկության զգացողություն սերմանելու միջոց։

Իրենց աշխատանքի ընթացքում աշակերտները հանգեցին հետևյալ եզրակացություններին.

1. Կոնֆետների վրա գրված անվանումները տեղեկատվության աղբյուր են։
2. Դրանցում կարելի է գտնել ռուսաց լեզվի ուղղագրական չափանիշները։
3. Ուղղագրության վրա ուշադրություն գրավելու համար կարելի է խաղեր խաղալ կոնֆետների փաթաթաններով (նաև դասապրոցեսի ընթացքում)։

Այսպիսով, այս աշխատանքը հնարավորություն տվեց աշակերտներին՝

- խորացնել լուսաց լեզվի իրենց գիտելիքները հետևյալ թեմաներով՝ բառագիտություն, ձևաբանություն, բառակազմություն, ուղղագրություն,
- ցույց տալ իրենց ստեղծագործական ունակությունները,
- ուսումնասիրել ռուսաց լեզվի ուղղագրական օրինաչափությունները:

Նախագծի վերջնաարդյունքները

Աշակերտները կարողանում են՝

- ուսումնասիրել և ընդլայնել սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնազարգացման վարքագիծ.
- տարբեր աղբյուրներից դուրս բերել հետազոտական թեմային առնչվող նյութեր, ստեղծել տեքստային ընդհանրացումներ, ձևակերպել եզրակացություն, գրել կարծիք, համեմատական կամ վերլուծական շարադրանք, մասնակցել քննարկումների, արտահայտել սեփական կարծիքը և պաշտպանել սեփական տեսակետը.
- բացահայտել և ուսումնասիրել ռուսաց լեզվի ուղղագրական օրինաչափությունները.
- կիրառել ձեռք բերված գիտելիքները բանավոր և գրավոր խոսքում. ցուցաբերել արժևորող վերաբերմունք առարկայի նկատմամբ:

Ըստ կատարած հետազոտության գրանցվել են հետևյալ արդյունքները՝

1. Բովանդակությունը ամբողջովին համապատասխանում է թեմային:

(3 միավոր)

2. Աշխատանքը ամբողջական է: Առկա են ոչ էական թերություններ:

(3 միավոր)

3. Սկզբնաղբյուրի ուսումնասիրությունը ամբողջական է:

(1միավոր)

4. Կատարված աշխատանքի ճիշտ և մանրամասն ներկայացում:

(1 միավոր)

5. Աշխատանքի ներկայացման ձևը/միջոցն ամբողջովին արտացոլում է թեմայի բովանդակությունը: **(1միավոր)**

6. Խոսքը գրագետ է, տրամաբանված :

(1 միավոր)